



## **Կարգապահական գործ թիվ ԿԳ-16021**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի  
2016 թվականի մարտի 03-ի թիվ 61-րդ ԿԳ նիստի

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/51-Ա**

### **ՓԱՍՏԱԲԱՆ ՎԱՀԱԳՆ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾՈՎ)**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետև՝ խորհուրդ**), նիստը նախագահող՝ Կարապետ Աղաջանյանի, խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Մեծլումյանի, Լուսինե Սահակյանի, Լիպարիտ Սիմոնյանի, Երվանդ Վարոսյանի  
Քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,  
Քննության առնելով փաստաբան Վահագն Դանիելյանին (արտոնագիր թիվ 425) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ լիարցը,

### **Պ Ա Ր Ձ Ե Ց'**

#### **1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.**

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից 01.02.2016թ-ին տրամադրված տեղեկանքի փաստաբան Վահագն Դանիելյանը ունի 60. 000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2015թ. հունվարից մինչև 2015թ. դեկտեմբեր (ներառյալ) ամիսների համար:

#### **2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.**

01.02.2016թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալի թիվ 35-Ա/ԿԳ-16021 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել Վահագն Դանիելյանի նկատմամբ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1 կետի խախտման հատկանիշներով:

05.02.2016թ-ին կարգապահական գործը հանձնվել է Պալատի խորհրդի անդամ Կարապետ Աղաջանյանին (նիստը նախագահող):

09.02.2016թ-ին գործը ընդունվել է վարույթ և նիստի օր է նշանակվել 03.03.2016թ-ին, ժամը 20:06-ին:

### **3. Պատասխանողի համառոտ բացատրությունները.**

Փաստաբան Վահագն Դանիելյանը թեև պատշաճ ծանուցվել էր կարգապահական նիստի վայրի և ժամի մասին, սակայն Խորհրդի նիստին չի ներկայացել և բացատրություն չի տվել:

### **4. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.**

Պալատի խորհուրդն, ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1) փաստաբան Վահագն Դանիելյանը փաստաբանական գործունեության արտոնագիր է ստացել 15.04.2002թ., որը հաստատվում է Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 03.03.2016թ. տրամադրված տեղեկանքով,

2) փաստաբան Վահագն Դանիելյանը ունի 60.000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2015թ. հունվարից մինչև 2015թ. դեկտեմբեր (ներառյալ) ամիսների համար, որը հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 01.02.2016թ. տրամադրված տեղեկանքով,

3) Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 03.03.2016թ. Խորհրդին տրամադրված տեղեկանքի համաձայն փաստաբան Վահագն Դանիելյանը իր անդամավճարի պարտքը չի վճարել:

### **5. Պատասխանողի անձր բնութագրող հանգամանքները.**

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 03.03.2016թ. տրամադրված տեղեկանքի համաձայն Վահագն Դանիելյանի (արտոնագիր 425, ստացված՝ 15.04.2002թ.) նկատմամբ 2006-2016թթ. ընկած ժամանակահատվածում կիրառվել են հետևյալ կարգապահական տույժերը՝

- 07.07.2009թ. թիվ 16/2 որոշմամբ անդամավճար չվճարելու համար հարուցված կարգապահական գործի վարույթը կարճվել է արտոնություն կիրառելու հիմքով,
- 20.01.2010թ. թիվ 1/4 որոշմամբ անդամավճար չվճարելու համար հարուցված կարգապահական գործի վարույթը կարճվել է արտոնություն կիրառելու հիմքով,
- 09.08.2011թ. թիվ 16/3 որոշմամբ անդամավճար չվճարելու համար հարուցված կարգապահական գործի վարույթը կարճվել է արտոնություն կիրառելու հիմքով,
- 14.02.2014թ. թիվ 16/1 որոշմամբ հարուցված կարգապահական գործի

- վարույթը կարճվել է ,
- 21.03.2014թ. թիվ 27/ԿԳ-1 որոշմամբ հարուցված կարգապահական գործի վարույթը կարճվել է ,
  - 19.02.2016թ թիվ ԿԳ/19-Ա որոշմամբ հարուցված կարգապահական գործի վարույթը կասեցվել է:

## **6. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.**

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Վահագն Դանիելյանին պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության, հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերության համաձայն՝ Փաստաբանը փաստաբանների պալատի սահմանած չափով և կարգով մուծում է անդամավճար՝ փաստաբանների պալատի ընդհանուր պահանջների և փաստաբանական գործունեության իրականացման հետ կապված այլ ծախսերի համար: Նույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է մուծել անդամավճարներ:

Համաձայն «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1. կետի՝ «Փաստաբանը պարտավոր է սահմանված կարգով և չափով Պալատին վճարել անդամավճար:»:

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ.-ին թիվ 33/6-Լ որոշմամբ ընդունված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգի (այսուհետև Կարգ) 7-րդ կետի՝ Փաստաբանները յուրաքանչյուր ամսվա համար անդամավճարների վճարումը կատարում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև տասնհինգը, իսկ նույն Կարգի 21-րդ կետով սահմանվում է՝ «Ամենամսյա վճար վճարելու պարտականությունը խախտելու համար փաստաբանը կամ օգնականը ենթակա են կարգապահական պատասխանատվության:»:

Վերոնշյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ սահմանված ժամկետներում անդամավճար չվճարելու համար փաստաբանն ենթակա է պատասխանատվության:

Փաստաբան Վահագն Դանիելյանը խախտել է վերը նշված նորմերի պահանջները, որն ապացուցվում է գործում առկա՝ ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից 03.03.2016թ. տրամադրված տեղեկանքով: Խորհուրդը կարգապահական տույժ նշանակելիս հաշվի է առնում, որ սույն որոշումը կայացնելու դրությամբ փաստաբան Վահագն Դանիելյանը կարգապահական պատասխանատվության չի ենթարկվել:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9. հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Հայաստանի

Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի պահանջներով խորհուրդը՝

### **Ո Ր Ո Շ Ե Ց՝**

1. Փաստաբան Վահագն Դանիելյանին (արտոնագիր թիվ 425) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1. կետի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Վահագն Դանիելյանին(արտոնագիր թիվ 425) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Վահագն Դանիելյանին:

*Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկ ամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի  
կարգապահական գործով  
նիստը նախագահող՝

Կարապետ Աղաջանյան